



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016



MURRAY HILL 6-0710

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Առաջնորդ

Bishop Torkom Manougian, Primate

Թիւ 17060

Մարտ 13, 1967

Արժանաշնորհ
Տ. Սարգիս Թհնյ. Գաշըզեան
Հոգեւոր Հովիւ Ս. Գրիգոր Լուս. Եկեղեցւոյ
եւ Նախագահ Մխական Խորհուրդի
Միգակօ.

Սիրելի Տէր Սարգիս,

Առաջած ենք 1967 Մարտ 6 թուակիր Ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ Ձեր նախագահութեամբ՝ փետրուար 24ին գումարուած Ձեր Մխական Ժողովին մէջ կատարուած է Մխական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայցնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ժողովը տեղի ունեցած է թեմական Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք Մխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Այս առիթով կը յայտնենք թէ կարգ մը համայնքներ մօտէն չեն հետեւած թեմական Կանոնադրութեան յօդուածներուն, եւ պակասաւոր տեղեկութիւններ ղրկած են Առաջնորդարան: Ուստի, այժմէն կ'ազդարարենք որ յառաջիկային կարեւորութեամբ նկատի պիտի առնենք գործադրութիւնը Կանոնադրութեան տրամադրութեանց:

Հանեցէք փութով Առաջնորդարան ղրկել նորընտիր Դիւանի անդամոց անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով Մխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունել

ԹՈՐԳՈՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Տիարք՝ Փիթըր Գլուհեան
Ճէք Մատթէոսեան
Ռապըրդ Գալէնեան
Ուիլիքմ Թութուեան
Նշան Պապիկեան